

Կարծիք

Քրիստենե Համլետի Մեծլուսյանի

«Անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման հաղորդակցական ռազմավարությունները» խորագրով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված խորագրով ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Բժշկական կողմնորոշման անգլերենի ուսուցման հիմնախնդիրը միշտ էլ եղել է արդիական, հատկապես, երբ աստիճանաբար փորձ է արվում դնել այն հաղորդակցական հիմքերի վրա: Ավանդաբար բժշկական կողմնորոշման անգլերենի դասընթացում խնդիր էր դրվում ընթերցել անգլերեն լեզվով մասնագիտական տեքստերը, թարգմանել դրանք, հնարավորինս հաղթահարել տեքստում առկա քերականական դժվարությունները: Բառապաշարի շուրջ աշխատանքը հիմնականում սահմանափակվում է բժշկական եզրույթների շուրջ իրականացվող աշխատանքով, որը ինչ-որ առումով դժվարություն չի ներկայացնում, քանի որ բժշկական եզրույթները, մեծամասամբ ունենալով լատինական ծագում, շատ արագ յուրացվում էին ուսանողների կողմից: Սակայն այդպիսի աշխատանքը չի տալիս ցանկալի արդյունք՝ հատկապես նրանց հաղորդակցական կոմպետենցիայի զարգացման տեսանկյունից: Ինչպես նշում է ատենախոսը՝ «Բավականին լավ էին մշակված բառային փոխներթափանցման հաղթահարմանը միտված վարժությունները, սակայն մշակութային, խոսութային փոխներթափանցման դրսևորումները բավարար չափով ուշադրության չէին արժանանում»:

Ինչ վերաբերում է լեզվակիր բժիշկների կենդանի խոսքի ուսուցմանը, ապա այն միայն վերջերս է դարձել առանձին հետազոտության առարկա: Հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները հստակ են ձևակերպված: Ատենախոսին հաջողվել է մշակել վարժությունների համակարգ՝ ըստ կոնկրետ ռազմավարությունների:

Հետաքրքիր է այն, որ ատենախոսը վերլուծել է ոչ միայն բժշկական ենթալեզվին վերաբերող մասնագիտական դասագրքերը, այլև մշակումները, որոնք հիմնականում հրատարակված չեն: Դրական է այն, որ ատենախոսն ուսումնասիրել է դրանք, հիմք ընդունելով համապատասխան լեզվաբանական ուղղվածության հետազոտությունները /բժիշկ, հիվանդ, դեղամիջոց, բուժում և այլն/, ինչպես նաև զուգորդական-իմաստային դաշտերը: Այսինքն՝ նա ուսումնասիրել է ուսուցողական նպատակներով բժշկական կոնցեպտները կամ հասկացույթները: Ընդ որում՝ նույն տրամաբանությամբ նա առաջին պլան է մղում ոչ թե բժշկական տեքստի, այլ խոսույթի շուրջ աշխատանքը:

Քրիստինե Մեժլումյանը բազմիցս ընդգծում է, որ հետազոտությունն իրականացնում է խոսութային, հասկացութային, ճանաչողական-հաղորդակցական մոտեցումների տեսանկյուններից:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործած գրականության ցանկից, գծապատկերներից, աղյուսակներից, բնագիր տեքստերից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 137 էջ:

Ներածության մեջ ատենախոսը հանգամանորեն հիմնավորել է թեմայի արդիականությունը, ձևակերպել հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, հետազոտության վարկածը, մեթոդաբանական հիմքերը, խնդիրները: Բավականին լավ է ներկայացված հետազոտության գիտական նորույթը:

Ատենախոսության առաջին **«Բժշկական բառապաշարի ուսուցման առանձնահատկություններն անգլերենի մասնագիտական կողմնորոշման դասընթացում»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին **«Անգլերենի բժշկական բառապաշարի ընդրության և ուսուցման հիմնախնդիրը»** ենթագլխում Քրիստինե Մեժլումյանը վերլուծում է անգլերեն բժշկական բառապաշարի հիմնական միավորները բառի և հասկացույթի մակարդակներում: Նորույթն այն է, որ ատենախոսն ուսուցողական նպատակներով քննության է առնում անգլերեն բժշկական հասկացույթները: Ընդ որում՝ նա բժշկական հասկացույթները

ներմուծում և ուսուցանում է բժշկությանը վերաբերող ասացվածքների, ասույթների, թևավոր խոսքերի, տարբեր հատկաբանությունների միջոցով:

Երկրորդ **«Անգլերենի բժշկական բառապաշարի ուսուցման փրամախոսական հայեցակերպը»** ենթագլխում ատենախոսը ներկայացնում է «բժշկական խոսույթ» հասկացությունը, առաջարկելով ուսուցողական նպատակներով կիրառել խոսույթային վերլուծությունը:

Երրորդ **«Անգլերենի բժշկական մեղմասությունների ուսուցման ռազմավարությունները»** ենթագլխում ատենախոսը բավականին նորարական մոտեցում է կիրառում՝ ուսուցման միավոր դարձնելով անգլերենի բժշկական մեղմասությունները: Նա կարողանում է ցույց տալ այն դժվարությունները, որոնք հաղթահարում են ապագա բժիշկները դրանք յուրացնելու ընթացքում, այն առումով, որ տարբեր են անգլերեն և հայերեն խոսող բժիշկների մտածելակերպը, աշխատանքային պայմանները, հաղորդակցական վարքագծի նորմերն ու կարծրատիպերը:

Ատենախոսության երկրորդ **«Անգլերենի լեզվաոճական հնարների կիրառումը անգլերենի բժշկական ենթալեզվում»** գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին **«Անգլերենի բժշկական ծածկալեզվի ուսուցման առանձնահատկությունները հայալեզու լսարանում»** ենթագլխում Քրիստինե Մեծլումյանը ներկայացնում է անգլերեն բժշկական խոսույթի գործառական բնութագրերը: Նորույթ է նաև այն, որ ատենախոսը խնդիր է դնում յուրացնել անգլերեն լեզվաոճական հնարները ինդուկտիվ՝ ներակա եղանակով: Բարձր լեզվական մակարդակ ունեցող ապագա բժիշկները, չլինելով լեզվաբաններ, մեծ հետաքրքրություն են դրսևորում անգլերեն բժշկական խոսույթին բնորոշ լեզվաոճական հնարների նկատմամբ:

Ատենախոսության մյուս դրական կողմերից մեկն էլ այն է, որ ատենախոսն առաջարկում է անգլերեն բժշկական ծածկալեզվի ուսուցման մեթոդիկա:

Երկրորդ գլխի երկրորդ **«Անգլերենի բժշկական փոխաբերությունների ուսուցման հիմնախնդիրը»** ենթագլխում ատենախոսը սահմանում է «բժշկական փոխաբերություն» հասկացությունը: Բավականին մեծ աշխատանք է կատարված անգլերեն բժշկական

փոխաբերությունները բազմաբնույթ տիպական օրինակներով ներկայացնելու տեսանկյունից: Ընդհանարապես, օտար լեզուների դասավանդման ոլորտում բժշկական փոխաբերությունների ուսուցմանը նվիրված շատ աշխատանքներ կան: Սակայն նորույթն այն է, որ փոխաբերությունները ներմուծվում է բժշկական հասկացույթների իմաստային-զուգորդական դաշտերի յուրացման արդյունքում:

Ատենախոսության երրորդ՝ **«Անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման մեթոդական համակարգը և նրա արդյունավետության փորձարարական հիմնավորումը»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Երրորդ գլխի առաջին **«Անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման ռազմավարությունների կիրառման օպտիմալ կադապարը»** ենթագլխում ատենախոսը ներկայացնում է անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման մեթոդական համակարգը, որի հիմքում ընկած է անգլերեն բժշկական բառապաշարի ուսուցման մոդելը:

Երրորդ գլխի երկրորդ **«Անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման վարժությունների համակարգը»** ենթագլխում Քրիստինե Մեժլումյանը ներկայացնում է առաջադրանքների (task-based), պրոբլեմների (problem-based), դեպքերի (case-based), իրադրությունների (situation-based) վրա հիմնված վարժությունների համակարգը և հիմնավորում պրոբլեմների վրա հիմնված առաջադրանքների արդյունավետությունը բժշկական ենթալեզվի ուսուցման տեսանկյունից:

Երրորդ գլխի երրորդ **«Անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման և կիրառման մեթոդական համակարգը»** ենթագլխում ատենախոսը ներկայացնում է անգլերեն բժշկական ենթալեզվի ուսուցման այն նախագծերը, որոնք հնարավոր է կիրառել բակալավրիատի, մագիստրատուրայի, կլինիկական օրդինատուրայի մակարդակներում: Դրական է նաև այն, որ ատենախոսը վերլուծել է արտերկրում և ՀՀ-ում լույս տեսած մի շարք բժշկական անգլերենի դասագրքեր, ներկայացրել դրանցից օգտվելու իր մոտեցումը:

Հավաստի են փորձարարական ուսուցման արդյունքերը, որի հիմնական նպատակներից մեկն եղել է ապահովել ուսանողների լեզվազգացողության, լեզվամտածողության շարունակական զարգացումը:

Հետազոտության եզրակացություններն արտացոլում են նրա առաջադիր խնդիրները, ամբողջական են, տրամաբանորեն փոխկապակցված: Հետազոտության ընթացքում օգտագործած գրականությունն արդիական է: Սեղմագիրը և հոդվածներն արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Աշխատանքն ավելի կշահեր, եթե ատենախոսն ուշադրություն դարձներ հետևյալ դիտարկումների վրա"

1. Առանձնացնելով բժշկության ոլորտում մասնագիտական մակարդակում հաղորդակցական և մասնագիտական կոմպետենցիայի ձևավորման և զարգացման ռազմավարությունները, ատենախոսը ճիշտ կլիներ ներկայացնել, թե ուսուցման տեսանկյունից որ ռազմավարությունն է ավելի կարևորում: Գաղտնիք չէ, որ հաղորդակցական լավատեսության, հաղորդակցման ընթացքում աջակցման ռազմավարությունների կիրառումը հատկապես հայալեզու ուսանողների համար մեծ դժվարություն է ներկայացնում:
2. Յուրահատուկ է այն մոտեցումը, ըստ որի՝ անգլերենի բժշկական փոխաբերությունների ներմուծման, ամրապնդման, յուրացման ընթացակարգերն անհրաժեշտ է դիտարկել ընդհանուր բառապաշարի ուսուցման համատեքստում, սակայն ատենախոսը չի շեշտադրում, թե ինչ լեզվական մակարդակում է դա հնարավոր:
3. Կուզենայի, որ ատենախոսը պարզաբաներ, թե հնչարտաբերական կոմպետենցիայի ձևավորումը ինչու է առաջնային" չէ՞ որ մենք գործ ունենք անգլերենի մասնագիտական կողնորոշման դասընթացի հետ:
4. Աշխատանքում տեղ են գտել որոշ լեզվաոճական բնույթի վրիպումներ:

Այսպիսով, Քրիստենե Համլետի Մեծլումյանի «Անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման հաղորդակցական ռազմավարությունները» խորագրով

ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԲՈԿ-ի կողմից ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, և հեղինակն արժանի է իր կողմից հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Մանկ.գիտ.թեկնածու, դոցենտ

Ս. Խ. Բաղդասարյան

Ս. Խ. Բաղդասարյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական պետական
համալսարանի գիտքարտուղար,
ման. գիտ. թեկնածու, դոցենտ
11.09.2023թ.



Մ. Մ. Իսպիրյան